Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 8 -ի N 30 - Լ որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2026-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

***Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2026-2030 թվականների ռազմավարական ծրագրի մշտադիտարկման թիրախային ցուցանիշները ներկայացված են սույն հավելվածի Աղյուսակ 1-ով**

| Հ/Հ | ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՄԱՍՆԱՎՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ | ՀԱՄԱԿԱՏԱՐՈՂ ՄԱՐՄԻՆ | ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ /ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ/ | | | | | ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՄ ԸՆԴԱՄԵՆԸ /ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ/ | ՖԻՆԱՆՍԱՎՈՐ-ՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2026 ԹՎԱԿԱՆ | 2027 ԹՎԱԿԱՆ | 2028 ԹՎԱԿԱՆ | 2029 ԹՎԱԿԱՆ | 2030 ԹՎԱԿԱՆ | | |
| 1 | ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1 | Զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ վիճակագրության բարելավում | Բարելավվել ներգնա և ներքին զբոսաշրջության տվյալների հավաքագրման և վերլուծության համակարգերը՝ ապահովելով տվյալներ՝ ըստ տարածքային բաշխման, այցելուների ժողովրդագրական տվյալների, այցելության նպատակի, տևողության և այլն<br><br>Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց վերաբերյալ տեղեկատվական բազայի ձևավորում՝ հիմնվելով զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանի տվյալների վրա<br><br>Հավաքագրել ներքին զբոսաշրջային այցելությունների վերաբերյալ տեղեկատվություն գործունեությունը ծանուցած զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանցից<br><br>Ապահովել ներքին, ներգնա և արտագնա զբոսաշրջային այցելությունների և մեկօրյա այցելուների մարզային բաշխվածության, այցելությունների նպատակի, սեռատարիքային կազմի և այլնի վերաբերյալ տեղեկատվության առկայությունը | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 5,000.0 | 7,000.0 | 7,000.0 | 10,000.0 | 10,000.0 | 39,000.0 | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.2 | Ծախս-օգուտ պարբերական վերլուծությունների իրականացում և մարկետինգային գործունեության արդյունավետության մշտադիտարկում | Պարբերաբար իրականացնել զբոսաշրջության մարկետինգային գործունեության գնահատման աշխատանքներ՝ կիրառելով հիմնական կատարողականի ցուցանիշներ (KPI-ներ), ինչպես օրինակ՝ հասանելիություն, ներգրավվածություն, փոխակերպման ցուցանիշներ և ներդրման արդյունավետություն (ROI)<br><br>Կատարված վերլուծությունների հիման վրա իրականացնել զբոսաշրջության բնագավառում ռազմավարությունների կատարելագործմանը և բյուջետային բաշխումներին (վերաբաշխումներին) ուղղված աշխատանքներ | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | - | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի նախատեսվում |
| 1.3 | Զբոսաշրջության բնագավառում առկա խնդիրների, պետական քաղաքականություն մշակող մարմնի գործառույթներից և լիազորություններից դուրս հարցերի կարգավորում | Զբոսաշրջության բնագավառում առկա խնդիրների կարգավորման նպատակով Տնտեսական փոխակերպման և կայուն զարգացման ռազմավարության շրջանակներում ստեղծվելիք միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերի օրակարգում զբոսաշրջության բնագավառին առնչվող հարցերի ներառում | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | - | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի նախատեսվում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.4 | «Հայաստանի զբոսաշրջության մրցունակության բարելավմանն ուղղված գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունում | Պարբերական աշխատանքներ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ վերջիններիս համակարգման ոլորտներում զբոսաշրջության մրցունակության բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման, դրանց վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրման, ամփոփման, խնդիրների վերլուծության և դրանց լուծման ուղղությամբ առաջարկների մշակման ու իրականացման շուրջ<br><br>«Ճամփորդության և զբոսաշրջության զարգացման ցուցիչում»-ում Հայաստանի դիրքի բարելավում՝<br><br>- Զբոսաշրջային փոխայցելությունների ընթացակարգերի պարզեցման և մուտքի արտոնագրի պահանջների դյուրինացման գործընթացների շարունակական իրականացում,<br><br>- Համայնքների հետ, մասնավորապես բնակչության շրջանում համագործակցության իրականացում, հանրային, մասնավորապես բնակչության շրջանում զբոսաշրջության կարևորության և նշանակության ներկայացում և իրազեկման աշխատանքների շարունակական իրականացում և այլն: | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | - | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի նախատեսվում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2** | **Տնտեսական ուղղություն. Ռազմավարական նպատակ 1. զբոսաշրջության տնտեսական ներուժի ամբողջական օգտագործում** | | | | | | | | | | | |
| **2.1** | **Խթանել հավասարաչափ տարածքային զարգացումը բնակիչների կենսամակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման և զբաղվածության հնարավորությունների ստեղծման նպատակով՝ զբոսաշրջության ապակենտրոնացման և ռեսուրսների բաշխման միջոցով: Հզորացնել կառավարման համակարգը, հաստատել զբոսաշրջային կենտրոններ (կլաստեր) և զբոսաշրջային գյուղեր, ապահովել զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների (DMO) բնականոն գործունեությունը:** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.1.1 | Նշանակալի զբոսաշրջային ռեսուրս պարունակող բնակավայրերի, վարչական շրջանների կամ վարչատարածքային միավորների, ինչպես նաև դրանց համախմբերի, այդ թվում՝ Արենիի, Դիլիջանի, Դվինի, Գյումրիի, Ջերմուկի, Գորիսի, Եղեգիսի, զբոսաշրջային կենտրոն (կլաստեր) հայտարարում | Բացահայտել բնակավայրերի կամ բնակավայրերի համախմբի տարածաշրջանային/համայնքային առանձնահատկությունները և ռեսուրսները, ապահովել զբոսաշրջային կենտրոնների /կլաստերների/ բրենդավորումը<br><br>Ապահովել մարզերի զբոսաշրջային ներուժի քարտեզագրումը՝ զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի առկայությամբ<br><br>Յուրաքանչյուր զբոսաշրջային կենտրոնի (կլաստեր) համար մշակել ճանապարհային քարտեզ, կլիմային և աղետներին դիմակայուն գլխավոր հատակագիծ և գոտիավորման պլան՝ ազգային, տարածաշրջանային և տեղական զարգացման ծրագրերին համապատասխան<br><br>Յուրաքանչյուր զբոսաշրջային կենտրոնի (կլաստեր) համար մշակել կառավարման պլան՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ և մասնակցայնությամբ<br><br>Իրականացնել հանրային իրազեկման արշավներ և քաղաքացիներին ներգրավման միջոցառումներ<br><br>Ապահովել զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպությունների ստեղծման և պատշաճ գործունեության կազմակերպման աշխատանքները | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 200,000.0 | 300,000.0 | 300,000.0 | 300,000.0 | 300,000.0 | 1,400,000.0 | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,<br><br>վարկային միջոցներ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ապահովել ակտիվ համագործակցություն մասնավոր հատվածի հետ<br><br>Կազմակերպել մրցույթ որակավորված զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություններից մեկ մարզային կամ տեղական մակարդակով զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության (DMO) ընտրության համար | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.1.2 | Զբոսաշրջային գյուղերի հայտարարում՝ առաջնորդվելով տեղի մշակույթի, բնության և ոչ նյութական ժառանգության խթանմանն ուղղված չափանիշներով | Յուրաքանչյուր զբոսաշրջային գյուղի համար մշակել կառավարման պլան՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ և մասնակցայնությամբ<br><br>Մշակել աջակցության մեխանիզմներ զբոսաշրջային գյուղերի համար<br><br>Մշակել յուրաքանչյուր գյուղի համար խթանման նյութեր՝ առաջնորդվելով տեղի առանձնահատկություններով և առաջարկներով | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.1.3 | Զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում | Զբոսաշրջային գրավչության վայրերի հասանելիության բացերի լուծման նպատակով բարեկարգել ճանապարհները<br><br>Տեղադրել ճանապարհներին ցուցանակներ, նշաններ, տեղեկատվական վահանակներ<br><br>Իրականացնել զբոսաշրջիկների սպասարկման համար նախատեսված հարմարությունների ստեղծմանն ուղղված աշխատանքներ<br><br>Կառուցել կամ վերականգնել թանգարաններ, տեղական տնտեսության զարգացմանը նպաստող  զբոսաշրջային գրավչության վայրեր<br><br>Մշակել ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակացույց՝ համակարգելով այն տեղական ինքնակառավարման մարմինների հետ<br><br>Սահմանել կառավարման համապատասխան համակարգեր ենթակառուցվածքների կայուն և երկարաժամկետ շահագործում ապահովելու նպատակով | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2.2** | **Ապահովել զբոսաշրջության և այլ ոլորտների միջև (գյուղատնտեսության, առողջապահության, տեխնոլոգիաների և այլն) համագործակցության ամրապնդումը՝ զբոսաշրջության միջոցով այլ ոլորտների զարգացումն ապահովելու և տեղի արտադրանքն ու ծառայությունները խթանելու նպատակով:** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2.1 | Միջոլորտային ինտեգրման ապահովում | Ապահովել մասնագիտացված զբոսաշրջային փաթեթների մշակումը՝ ներառելով տեղի գյուղատնտեսության, բժշկական, առողջարանային և նորարարական տեխնոլոգիաների հնարավորությունները<br><br>Նպաստել զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց և տեղի արտադրողների միջև համագործակցության հաստատմանը. ապահովել գործարար համագործակցության հարթակների ստեղծումը՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց և տեղի մատակարարների միջև կապ հաստատելու նպատակով<br><br>Ներդնել տեղի արտադրանքի օգտագործման վկայականների համակարգ հյուրանոցային և հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց համար<br><br>Ապահովել ակտիվ միջգերատեսչական համագործակցություն, այդ թվում՝ զբոսաշրջության, շրջակա միջավայրի, մշակույթի և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում<br><br>Ներդնել տնտեսական գնահատման գործիքակազմ՝ զբոսաշրջության ոլորտից առաջացող ավելացված արժեքը և տարածաշրջանային ազդեցությունը համակարգված կերպով չափելու և վերլուծելու նպատակով: | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2027-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.2.2. | Հարևան երկրների հետ սահմանագծով «Զբոսաշրջային խաչմերուկ» խորագրի ներքո երթուղիների մշակում՝ հիմնված կայուն, պատասխանատու զբոսաշրջության սկզբունքների վրա, կապելով միմյանց մշակութային, բնական հուշարձանները, ծառայություն մատուցող անձանց և արտադրողներին, խորհրդանշելով բնության և ընդհանուր ժառանգության միջոցով խաղաղության հաստատումն ու ամրապնդումը | Իրականացնել համատեղ բնապահպանական արշավներ և շաբաթօրյակներ<br><br>Ապահովել առցանց քարտեզագրման և զբոսաշրջային ռեսուրսները ներկայացնելու, պատմություն պատմելու հարթակների առկայությունը<br><br>Ներկայացնել համատեղ առաջարկներ, մշակել տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթներ<br><br>Մշակել համատեղ մարկետինգային նյութեր և ցուցանակներ առնվազն երեք լեզվով<br><br>Ապահովել սահմանամերձ բնակավայրերում խորհրդանշական միջոցառումների իրականացումը<br><br>Ապահովել Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների սահմանամերձ բնակավայրերի ծառայություն մատուցող անձանց և արտադրողների փորձի փոխանակման միջոցառումների իրականացում<br><br>Ապահովել խաղաղության և կայունության թեմաներով դասընթացների առկայությունը համայնքների համար<br><br>Ապահովել համայնքային զբոսաշրջության կառավարման կարողությունների զարգացման աշխատարանների կազմակերպում<br><br>Կազմակերպել | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2027-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ճանաչողական այցեր բլոգերների, ճանաչում ունեցող անձանց, լրագրողների համար<br><br>Ապահովել «Զբոսաշրջային խաչմերուկ»-ի փորձնական բացման միջոցառում, որին կմասնակցեն Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների նախարարները և մեդիայի ներկայացուցիչները | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **2.3** | **Խթանել զբոսաշրջության բնագավառում աջակցող գործարար և ձեռնարկատիրական միջավայրի ձևավորումը՝ ապահովելով հնարավոր լավագույն պայմաններ բիզնես սկսելու, գործունեություն ծավալելու և զարգանալու համար:** | | | | | | | | | | | |
| 2.3.1 | Ներդնել խթանման և աջակցության թիրախային համակարգեր զբոսաշրջության ոլորտում գործունեություն սկսող անձանց և փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների համար | Մշակել աջակցության ծրագրեր զբոսաշրջության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց համար<br><br>Զբոսաշրջային կենտրոններում (կլաստերներում) ապահովել խորհրդատվական ծառայությունների առկայություն տնտեսավարողների համար<br><br>Ապահովել ոլորտի փորձառու և սկսնակ գործարարներին միմյանց կապող մենթորական ծրագրերի առկայություն | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | Ֆինանսավորում չի պահանջում |
| **2.4** | **Ներգրավել ներդրումներ, այդ թվում՝ օտարերկրյա՝ նպաստելով զբոսաշրջության ոլորտում՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման միջոցով բիզնեսի ստեղծմանը կամ զարգացմանը:** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.4.1 | Միջազգային ճանաչված ապրանքանիշերի հետ համագործակցության ապահովում | Միջազգային բրենդ հանդիսացող հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց ներկայացնել Հայաստանի զբոսաշրջային հնարավորությունների, բարենպաստ ներդրումային միջավայրը<br><br>Ապահովել օտարերկրյա ներդրողների համար զբոսաշրջության ոլորտում ներդրումների գրավչության ներկայացումը<br><br>Ապահովել միջազգային միջոցառումների անցկացում, որտեղ կարելի է հրավիրել միջազգային հայտնի բրենդներին որպես գործընկեր կամ հովանավոր<br><br>Մշակել միջազգային PR արշավ՝ «Armenia: The Tourism Crossroads of the Caucasus» կարգախոսով<br><br>Ապահովել միջազգային ապրանքանիշերի մուտքը Հայաստան<br><br>Պետական աջակցություն միջազգային հայտնի ապրանքանիշերը ներմուծողներին, այդ թվում՝ պետական գույքի անհատույց տրամադրման միջոցով | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Ներդրումների աջակցման կենտրոն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի նախատեսվում |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.4.2 | Ներդրողների իրազեկվածության և տեղեկատվության մատչելիության ապահովում | Ապահովել զբոսաշրջային ներդրումային համապարփակ հարթակի առկայություն<br><br>Կազմակերպել տարածաշրջանային ներդրումային ֆորումներ զբոսաշրջային ներուժի բացահայտման ու պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդման նպատակով | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե<br><br>Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Ներդրումների աջակցման կենտրոն | 2028-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 0 | 0 | 30,000 | 10,000 | 10,000 | 50,000 | Հայաստանի Հանրապետությա ն պետական բյուջե, |
| **2.5** | **Ապահովել կազմակերպված զբոսաշրջության փաթեթներ առաջարկող զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կայունությունն ու աճը նպատակային շուկաներում:** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.5.1 | Կազմակերպված զբոսաշրջության զարգացման նպատակով համապատասխան քաղաքականության մշակում և շուկաներին հասանելիության ապահովում | Ներկայացնել մասնավոր հատվածի, մասնավորապես՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների շահերը միջգերատեսչական քննարկումների ընթացքում<br><br>Պարզեցնել նոր և գրավիչ շուկաների համար վիզաների ստացման քաղաքականությունը<br><br>Մշակել զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց օժանդակության ծրագրեր սեզոնային փոփոխություններին դիմակայելու նպատակով<br><br>Կազմակերպել կամ ֆինանսավորել կարևոր զբոսաշրջային ցուցահանդեսներում (տարեկան առնվազն 5 ցուցահանդես՝ ներառյալ մասնագիտացված կրոնական, արկածային, գինու, հնագիտական և գաստրոնոմիական ցուցահանդեսներ) Հայաստանի ներկայացումը մեկ միասնական տաղավարի ներքո<br><br>Կազմակերպել ճանաչողական այցեր կամ աջակցել ճանաչողական այցերի կազմակերպմանը օտարերկրյա լրագրողների, ճամփորդական բլոգերների, ինֆլուենսերների կամ զբոսաշրջության ոլորտին առնչություն ունեցող այլ անձանց համար<br><br>Ապահովել փոխճանաչողական այցեր կամ աջակցել փոխճանաչողական այցերի կազմակերպմանը թիրախային շուկաներում (B2B road shows) | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 200,000.0 | 300,000.0 | 400,000.0 | 500,000.0 | 600,000.0 | 2,000,000.0 | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,<br><br>վարկային միջոցներ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.5.2 | Զբոսաշրջային արդյունքի բարելավում և գործարար կապերի խթանում | Մշակել և հրատարակել զբոսաշրջային երթուղիներ, ինչպես նաև ազգային ուղեցույցներ զբոսաշրջային փաթեթների ձևավորման և բրենդավորման համար<br><br>Կազմակերպել B2B աշխատաժողովներ և ցանցային միջոցառումներ՝ զբոսաշրջային ծառայություններ մատուցողներին (զբոսաշրջային գործունեության սուբյեկտներ, հյուրանոցային ծառայություն մատուցող անձին, զբոսավարներ և այլն) կապելու համար<br><br>Մշակել B2B հարթակ՝ ներգրավելով մասնավոր հատվածը<br><br>Ներդնել զբոաշրջային ծառայությունների՝ միջազգային ստանդարտներին համապատասխան որակավորման համակարգեր<br><br>Ստեղծել որակի մշտադիտարկման և բարելավման համակարգեր | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |
| 2.5.3 | Կարողությունների զարգացում, այդ թվում՝ թվային փոխակերպման ոլորտում | Զբոսաշրջության ոլորտի տնտեսավարողների աշխատողների համար ապահովել թվային գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների իրականացմանն ուղղված աշխատանքներ<br><br>Շարունակական մասնագիտական զարգացման նպատակով աջակցել էլեկտրոնային ուսուցման հարթակների ստեղծմանն ուղղված նախաձեռնություններին<br><br>Ապահովել թվային | | Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարկետինգի օժանդակությամբ միջազգային հարթակներում ներկայացվածություն | | | | | | | | | | |
| 3 | **Միջազգային գրավչության ուղղություն. Ռազմավարական նպատակ 2. Հայաստանի՝ որպես գրավիչ զբոսաշրջային երկրի իմիջի բարձրացում համաշխարհային շուկայում** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.1** | **Հայաստանի Հանրապետությունը դիրքավորել որպես գողտրիկ (boutique) զբոսաշրջային ուղղություն՝ զարգացնելով «Հայաստան՝ թաքնված ուղի» (“Armenia: The Hidden Track”) զբոսաշրջային բրենդը, որը շեշտադրում է երկրի մշակութային ժառանգության, բնության և ինքնատիպության եզակի համադրությունը, և այն խթանել համակողմանի միջազգային մարկետինգային արշավներով՝ ուղղված թիրաախային և ներուժ ունեցող շուկաները:** | | | | | | | | | | | |
| 3.1.1 | ««Հայաստան՝ թաքնված ուղի» (“Armenia: The Hidden Track”) բրենդի ներքո զբոսաշրջության ազգային մարկետինգային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի ընդունում և իրականացում | Մշակել զբոսաշրջության բնագավառի մարկետինգային ծրագրի բովանդակությունը՝ առաջնորդվելով Հայաստանի՝ որպես գողտրիկ (boutique) զբոսաշրջային երկրի նկարագրի դիրքավորման գերակայությամբ<br><br>Մշակել բրենդի ներկայացման չափորոշիչներ և մշտադիտարկման համակարգ<br><br>Ստեղծել հայկական ինքնությունն արտացոլող հուշանվերներ՝ ներկայացնելով դրանք բրենդի ներքո<br><br>Սոցիալական հարթակների, կայքերի և բրենդավորված բովանդակության միջոցով իրականացնել հայկական զբոսաշրջային արդյունքի | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 1,485,000.0 | 1,913,000.0 | 2,383,000.0 | 2,900,000.0 | 3,400,000.0 | 12,081,000.0 | Հայաստանի Հանրապետությա ն պետական բյուջե |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թիրախավորված ներկայացման գործընթացներ | | | | | | | | | | |
| 3.1.2 | Հայկական ժառանգությունը ներկայացնող բարձրակարգ բովանդակության մշակում՝ ստեղծելով հիմք նոր բրենդի մշակման աշխատանքների համար | Ստեղծել և խթանել Հայաստանի պատմությունը, մշակույթը, բնությունն ու ժառանգությունը ներկայացնող բարձրորակ մեդիա բովանդակություն, այդ թվում՝<br>- ապահովել հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող բարձրորակ տեսանյութերի և թվային բովանդակության ստեղծումը,<br>- ապահովել Հայաստանի պատմությունը, մշակույթը, հայ ժողովուրդը ներկայացնող մեդիա բովանդակության՝ ֆիլմերի, հեռուստանովելների, ինֆլուենսերների կերտած բովանդակության ստեղծումը,<br><br>Մշակել համաշխարհային հարթակներում բովանդակության տարածման ծրագիր բարձր տեսանելիություն ապահովելու նպատակով<br><br>Ապահովել համագործակցություն բովանդակություն ստեղծող | | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ինֆլուենսերների հետ<br><br>Ապահովել մեդիա արտադրության օժանդակ ծառայությունների հնարավորություն<br><br>Խթանել գործող հայկական ապրանքանիշերը միջազգային շուկայում | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.1.3 | Մշակութային միջոցառումների իրականացմանն աջակցություն՝ առաջնորդվելով Հայաստանի՝ որպես գողտրիկ (boutique) զբոսաշրջային երկրի նկարագրի ներքո ներկայացվածությամբ | Բացահայտել և օժանդակել միջազգային գրավչություն ունեցող միջոցառումների զարգացմանը<br><br>Ստեղծել կամ աջակցել նոր հայկական զբոսաշրջային արդյունքը և ինքնատիպությունը ներկայացնող միջոցառումների իրականացմանը<br><br>Միջազգային հարթակների համար մշակել միջոցառումների խթանման ծրագիր<br><br>Ամրապնդել մշակութային հաստատությունների և մշակույթի ներկայացուցիչների հետ համագործակցությունը<br><br>Թվային մարկետինգի միջոցով նպաստել մշակութային զբոսաշրջության ուղիների զարգացմանը՝ քարտեզագրել և դասակարգել մշակութային բազմազանությանը և միջմշակութային երկխոսությանը ուղղված միջոցառումները (համերգներ, փառատոներ, միջազգային և հանրապետական այլ միջոցառումներ), խթանել Հայաստանի մշակույթի հանրահռչակումը: | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.1.4 | Հայաստանի՝ օտարերկրյա մեդիա հարթակներում, իմերսիվ փորձառություններում և ժամանցային հաղորդումներում ոչ ուղղակի ներկայացում | Ներգրավել միջազգային և ԱՊՀ երկրների ֆիլմարտադրող ընկերություններին՝ Հայաստանում նկարահանման նպատակով<br><br>Ձեռք բերել պայմանավորվածություններ թիրախային շուկաների հայտնի հեռուստաշոուների կամ շոուարտադրողների հետ՝ իրենց կողմից ստեղծված հեռուստաարտադրանքի, այդ թվում՝ հեռուստանովելների դրվագները Հայաստանում նկարահանելու վերաբերյալ<br><br>Խթանել Հայաստանի առաջմղումը համաշխարհային ճանաչում ունեցող սպորտային կամ այլ բրենդների գովազդային հոլովակների միջոցով (GoPro, Fisher, Dronne, North Face, Uniqlo և այլն)<br><br>Զարգացնել համատեղ բրենդավորման (co-branding) և հովանավորության ռազմավարություններ միջազգային բրենդների հետ | | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն | 2027-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.2** | **Ամրապնդել ու ակտիվացնել Հայաստանի տեսանելիությունն ու գրավչությունը ինչպես առկա, այնպես էլ զարգացող միջազգային շուկաներում՝ կիրառելով շուկայի կայունացման (Market Penetration) և շուկայի ընդլայնման և զարգացման (Market Development) ռազմավարություններ: Դիվերսիֆիկացնել շուկաները՝ նվազեցնելով Ռուսաստանի շուկայից կախվածությունը:** | | | | | | | | | | | |
| 3.2.1 | Թիրախային շուկաների ռազմավարական զարգացում և դիվերսիֆիկացում՝ նվազեցնելով մեկ շուկայից կախվածությունը: | Կայունացնել Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի շուկաները, զարգացնել Արևմտյան Եվրոպայի, Ծոցի երկրների շուկաները<br><br>Նպատակային ներգրավում. ստեղծել անհատական բովանդակություն և առաջարկ յուրաքանչյուր շուկայի համար<br><br>Կազմակերպել ճանաչողական այցեր ինֆլուենսերների, լրագրողների, բլոգերների համար՝ ընդգրկելով տուրեր<br>-<br>հեռուստաընկերությունների g և տպագրական մեդիայից լրագրողների,<br>- սոցիալական հարթակներում (հատկապես՝ Instagram հարթակում) 5 միլիոնից ավել հետևորդ ունեցող ինֆլուենսերների,<br>- համաշխարհային ճանաչում ունեցող հայտնի անձանց համար: | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.2.2 | Թվային մարկետինգի արդյունավետ կառավարում և լսարանի ներգրավում | Թիրախային շուկաների համար իրականացնել որոնողական համակարգերի օպտիմալացման (SEO) և գովազդի (SEM) ռազմավարությունների ներդրման աշխատանքներ<br><br>Մշակել թվային մարկետինգային արշավներ՝ հստակ և չափելի արդյունքներով<br><br>Ստեղծել վերլուծության և օպտիմալացման հստակ համակարգ (performance analytics framework)<br><br>Ուղղակի մարկետինգ. ստեղծել նպատակային խմբերի էլեկտրոնային հասցեների տվյալների բազա, կազմակերպել ամսական տեղեկագրերի տարածում՝ ներառելով սեզոնային առաջարկներ, միջոցառումներ և զբոսաշրջային նորություններ | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |
| 3.2.3 | Թիրախային շուկաներում ստեղծագործական արշավների իրականացում | Թիրախային շուկաների մարդաշատ քաղաքային տարածքներում ապահովել pop-up ֆորմատով հայկական զբոսաշրջային արդյունքի կամ փորձառությունների ներկայացումը<br><br>Ապահովել Հայաստանի տեսարժան վայրերը ներկայացնող ինտերակտիվ թվային ցուցադրությունները թիրախային շուկաների մեծ քաղաքների նշանակալի շինությունների վրա<br><br>Կազմակերպել «ֆլեշ-մոբ» ոճի մշակութային ելույթներ՝ համեմված հայկական երաժշտությամբ և պարերով անսպասելի վայրերում<br><br>Մշակել և խոշոր քաղաքներում ներկայացնել | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | «Թաքնված Հայաստան» թեմայով խաղեր՝ մասնակիցների համար նախատեսելով մրցանակներ, օրինակ՝ Հայաստան ճանապարհորդելու հնարավորություն, ավանդական հուշանվերներ և այլն | | | | | | | | | | |
| 3.2.4 | Հայաստանի ներկայացում համաշխարհային մեդիա դաշտում | **Ներկայացվածություն հեղինակություն վայելող (Premium) մեդիա հարթակներում:**<br>Դիրքավորել Հայաստանը միջազգային զբոսաշրջային և զանգվածային մեդիա հարթակներում (Travel and Leisure, Conde Nast, INSIDER, INSIDER Travel, PLAYGROUND, ATTN, UNILAD Adventure և այլն)<br><br>Համագործակցել առաջատար զբոսաշրջային հարթակների, ճամփորդական բլոգերների և մեդիա գործընկերների հետ (NatGeo, Lonely Planet և այլն)<br><br>**Զբոսաշրջային հարթակների ինտեգրում:**<br>Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի խթանում միջազգային զբոսաշրջային հարթակներում (Aviasales, Momondo, Skyscanner, Booking.com, Airbnb, Lonely Planet, Kayak.com, Expedia, Viator և այլն) | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ներգրավել հայտնի հեռուստաընկերությունների, տպագրական և առցանց մամուլի, զբոսաշրջային հաղորդումների և հեռուստաընկերությունների մասնագիտացված լրագրողներին | | | | | | | | | | |
| 3.2.5 | Մարկետինգային նյութերի ստեղծում և տարածում | Մշակել թվային և տպագիր մարկետինգային նյութեր՝ համապատասխանեցված յուրաքանչյուր շուկայի պահանջներին<br><br>Թիրախային շուկաներում ստեղծել և կայունացնել մարկետինգային նյութերի տարածման ցանցեր<br><br>Մշակել բովանդակության պարբերական թարմացման մեխանիզմ մարկետինգային նյութերի արդիականությունն ապահովելու նպատակով<br><br>Ստեղծել բազմալեզու մարկետիգային նյութեր տարբեր մշակութային և լեզվական խմբերի համար<br><br>Օպտիմալացնել նյութերը՝ ըստ տարածման նպատակի | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.2.6 | Ուղիղ կապերի զարգացում, հասանելիության ապահովում | Համագործակցել միջազգային ավիաընկերությունների հետ՝ ապահովելով թիրախային շուկաներից ուղիղ չվերթերի առկայությունը<br><br>Նպաստել նոր շուկաներից դեպի Հայաստան իրականացվող չվերթերի քանակի ավելացմանը<br><br>Մշակել միասնական մարկետինգային արշավներ ավիաընկերությունների և զբոսաշրջային օպերատորների հետ<br><br>Բանակցել ավիաընկերությունների հետ զբոսաշրջային պասիվ սեզոնի ընթացքում չարտերային թռիչքների ապահովման և համապատասխան սուբսիդավորման մեխանիզմների ներդրման ուղղությամբ | | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի կոմիտե | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |
| 3.2.7 | Համագործակցություն մեծ ներուժ ունեցող շուկաների հետ | Իրականացնել հետազոտություններ մեծ ներուժ ունեցող շուկաների բացահայտման նպատակով<br><br>Մշակել թիրախային ռազմավարական մոտեցումներ մեծ ներուժ ունեցող շուկաների համար | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |
| **3.3** | **Խթանել ներքին զբոսաշրջությունը՝ կորոնավիրուսային համավարակից հետո ձևավորված հնարավորությունների կիրառմամբ:** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.3.1 | Ներքին զբոսաշրջային ցուցահանդեսների և միջոցառումների իրականացման ապահովում | Իրականացնել «Բացահայտի՛ր քո հայրենիքը» խորագրով արշավ հայաստանյան լրագրողների, բլոգերների, ճանաչված և մեծ լսարան ունեցող հայտնի անձանց մասնակցությամբ<br><br>Երևանում և մարզերի այլ քաղաքներում վահանակների միջոցով տեղադրել սեզոնային գովազդներ<br><br>Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդի տեղադրում հայկական առցանց հարթակներում<br><br>Գովազդի տեղադրում Հայաստանի WiFi ցանցերում և թվային վահանակների տեղադրում հանրային տարածքներում<br><br>Գովազդային արշավների իրականացում առցանց հավելվածների միջոցով (Yandex, GG և այլն) | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |
| 3.3.2 | Հանգստի ծառայությունների գրավչության բարձրացում սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության և թիրախավորված խթանման միջոցառումների շնորհիվ | Զարգացնել ներքին զբոսաշրջիկների համար նախատեսված սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայությունները<br><br>Մշակել զբոսաշրջային պասիվ սեզոնի համար համապատասխան ռազմավարական մոտեցումներ<br><br>Սահմանել ներքին զբոսաշրջության աճի չափման մեթոդաբանություն և գնահատման համակարգ | | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |
| **3.4** | **Ներգրավել հայկական սփյուռքը՝ որպես զբոսաշրջության դեսպաններ և պաշտպաններ:** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.4.1 | Սփյուռքահայությանը նպատակաուղղված խթանման միջոցառումների իրականացում | Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող գովազդի տեղադրում առցանց հարթակներում<br><br>Օգտագործել Ազգային հեռուստաընկերությունների և ժամանցային-տեղեկատվական հոլովակների հնարավորությունները՝ որպես խթանման գործիք<br><br>Արշավների իրականացում սփյուռքին հասանելի հարթակներում | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |
| **3.5** | **Խթանել միջազգային համագործակցությունը, տարածաշրջանային զբոսաշրջային համագործակցություններ:** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.5.1 | Զբոսաշրջության ոլորտում արտաքին կապերի ամրապնդում և համագործակցության ապահովում միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ | Մշակել և ներկայացնել զոսաշրջության բնագավառում համագործակցության շրջանակում միջազգային համաձայնագրերի առաջարկներ<br><br>Օտարերկրյա պետությունների արտաքին կապերի համար պատասխանատու գերատեսչությունների հետ՝ վերջիններիս կողմից Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար անվտանգ և ապահով երկրի ներկայացմանն ուղղված պարբերական աշխատանքներ<br><br>Երկկողմ համագործակցությունների շրջանակում զբոսաշրջության բնագավառի ներկայացուցիչների հետ աշխատանքային նիստերի, ֆորումների, համաժողովների կազմակերպում Հայաստանում<br><br>Զբոսաշրջության բնագավառի միջազգային կազմակերպություններին անդամակցության առաջարկությունների ներկայացում<br><br>Նոր միջազգային կազմակերպություններին անդամակցություն համապատասխան ընթացակարգի կազմակերպում<br><br>Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ միջազգային միջոցառումների կազմակերպում Հայաստանում կամ | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հայաստանի մասնակցության ապահովում նշված միջոցառումներին<br><br>Միջազգային դոնոր կազմակերպությունների քարտեզագրում, դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում | | | | | | | | | | |
| **4.** | **Որակի ապահովման ուղղություն. Ռազմավարական նպատակ 3. բարելավել զբոսաշրջային ծառայությունները** | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **4.1** | **Դիվերսիֆիկացնել և զարգացնել ամբողջ տարվա համար, ինքնատիպ, փորձառնական զբոսաշրջային արդյունք (առկա արդյունքի հիման վրա զբոսաշրջային փաթեթների կազմում)՝ ներկայացնելով Հայաստանի մշակութային, գաստրոնոմիական և արկածային զբոսաշրջային ուղղությունների առկա ներուժը՝ նպաստելով սեզոնայնության նվազեցմանը և տարվա ընթացքում կայուն այցելությունների խթանմանը:** | | | | | | | | | | | |
| 4.1.1 | Զբոսաշրջային նոր թեմատիկ երթուղիների ձևավորում՝ կապելով միմյանց Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հայտարարված զբոսաշրջային կենտրոնները կամ զբոսաշրջային գյուղերը | Մշակել զբոսաշրջային երթուղիներ, որոնք միմյանց կկապեն զբոսաշրջային գյուղերն ու զբոսաշրջային կենտրոնները<br><br>Մշակել տեղեկատվական նշաններ և նյութեր<br><br>Զբոսաշրջային թեմատիկ երթուղիների կառավարման և պահպանման համակարգի ձևավորում | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մամիններ (համաձայնությամբ) | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.1.2 | Ոչ ակտիվ սեզոնի համար զբոսաշրջային արդյունքի մշակում՝ առկա ենթակառուցվածքների հիման վրա | Խթանել առողջարանային և վերականգնողական զբոսաշրջությունը ձմեռային այցելավայրերում<br><br>Մշակել կրոնական և ուխտագնացության երթուղիներ ամբողջ տարվա համար<br><br>Մշակել էկո և գյուղական զբոսաշրջության փորձառությունների խթանման ծրագրերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագծեր՝ կապված սեզոնային գործընթացների հետ, օրինակ՝ խաղողի հավաքում, էկոլոգիական հավաստագրի ներդրման ապահովում և այլն<br><br>Ապահովել պասիվ սեզոնի ընթացքում գաստրո առաջարկների առկայությունը, օրինակ՝ տարբեր փառատոների կազմակերպմանն աջակցությամբ<br><br>Մշակել աջակցության մեխանիզմներ ձմեռային ամիսներին մշակութային հաստատությունների, զբոսաշրջային ռեսուրսներ պարունակող վայրերը շահագործող անձանց, ձմեռային ամիսներին մարզերում ծառայություն մատուցող զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց համար<br><br>Կիրառել թեմատիկ ուղղվածությամբ արշավներ թիրախային շուկաներում, օրինակ՝ «Ձմեռը Հայաստանում» արշավ<br><br>Համագործակցել ինֆուենսերների, մեդիա | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով եզակի ձմեռային և գարնանային փործառություններ<br><br>Ապահովել սեզոնային առանձնահատկությամբ զբոսաշրջային փաթեթների մշակումն ու խթանումը՝ համագործակցելով զբոսաշրջային օպերատորների հետ<br><br>Մշակել մեխանիզմներ սեզոնի երկարաձգման համար | | | | | | | | | | | |
| 4.1.3 | «Բժշկական զբոսաշրջության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի համատեղ հրամանի ընդունում և իրականացում<br><br>«ՄԱՅՍ (MICE) զբոսաշրջության զարգացման ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հրամանի ընդունում և իրականացում | Վերլուծել ենթակառուցվածքների բացերը և գնահատել ուղղությունների մրցունակությունը<br><br>Մշակել ծրագրեր ներդրումների խթանման համար<br><br>Համագործակցել միջազգային ՄԱՅՍ և բժշկական օպերատորների հետ<br><br>Բացահայտել մեծ ներուժ ունեցող ծառայություններիը<br><br>Ներդնել որակի ստանդարտների և սերտիֆիկացման համակարգեր<br><br>Ապահովել զբոսաշրջիկների կյանքի և առողջության պահպանման երաշխիքների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ նախատեսելով հնարավորություններ՝ ուղղված հայաստանյան բժշկական կենտրոնների և թիրախային երկրների ապահովագրական ընկերությունների համագործակցությանը | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն<br><br>Ներդրումների աջակցման կենտրոն | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **4.2** | **Բարելավել զբոսաշրջային ծառայությունների որակը, ենթակառուցվածքները և թվային հնարավորությունները՝ արհեստական բանականության ներդրմամբ:** | | | | | | | | | | | |
| 4.2.1 | Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց էլեկտրոնային գրանցամատյանի ներդրում, զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց գործունեության կարգավորում և բարելավում | Զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ պահանջների և չափորոշիչների սահմանում, այդ թվում՝ ուղղված անվտանգ զբոսաշրջային ծառայությունների ապահովմանը<br><br>Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց որակավորման ընթացակարգերի, կարգերի, պահանջների մշակում և հաստատում<br><br>Զբոսաշրջային փորձառությունների որակավորման համակարգի ներդրում<br><br>Զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց միավորումների հետ համագործակցության ակտիվացում, այդ թվում՝ զբոսաշրջության բնագավառում որակավորման գործընթացին մասնակցության կամ իրականացման, մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման հնարավորության ընձեռնմամբ<br><br>Բարեփոխել զբոսաշրջային ուղևորափոխադրումների, ավտոտրանսպորտային | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | - | - | - | - | - | - | Ֆինանսավորում չի նախատեսվում |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | միջոցի վարձույթի ծառայությունների որակը՝ նախատեսելով համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ նշված ծառայություն մատուցող անձանց գործունեության կարգավորմանն ուղղված<br><br>Իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, որոնց արդյունքում զբոսաշրջիկներին ծառայություն մատուցող օրավարձով բնակարաններ և տներ շահագործող անձանց գործունեությունը ևս կկարգավորվի | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.2.2 | Հայաստանի Հանրապետության պատմամշակութային, բնական և այլ զբոսաշրջային գրավչության վայրերում Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող առնվազն 3 լեզվով աուդիոգիդերի ստեղծում | Առնվազն երեք լեզվով համապատասխան մեթոդական ուղեցույցների, զբոսաշրջային գրավչության վայրերի վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում.<br><br>Պետական շահագրգիռ մարմինների հետ համագործակցությամբ աուդիոգիդերի՝ պատմամշակութային, բնական և այլ զբոսաշրջային գրավչության վայրերում ապահովման հնարավոր տարբերակների մշակում՝ համապատասխան QR կոդերի կամ հավելվածների ստեղծման միջոցով: | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն | 2027-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 10,000 | 50,000 | 50,000 | 50,000 | 50,000 | 210,000 | Հայաստանի Հանրապետությա ն պետական բյուջե |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.2.3 | **Քաղաքային և գյուղական ենթակառուցվածքների արդիականացում՝ հաշվի առնելով ներառականության և ենթակառուցվածքների հասանելիության կարևորությունը** | Կազմակերպել մրցույթ որակավորված զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպություններից մեկ մարզային կամ տեղական մակարդակով զբոսաշրջային կենտրոն կառավարող կազմակերպության (DMO) ընտրության համար<br><br>Յուրաքանչյուր զբոսաշրջային կլաստերում առկա զբոսաշրջային բնական և մշակութային ռեսուրսների պահպանություն, պաշտպանություն և վերականգնում<br><br>Թանգարանների, զբոսաշրջային գրավչության վայրերի կառուցում կամ վերականգնում<br><br>Զբոսաշրջիկների առաջնային կարիքների բավարարման նպատակով նվազագույն ծառայությունների բարելավում, սանիտարական հանգույցներով ապահովում, ըստ անհրաժեշտության, արկածային զբոսաշրջիկների անվտանգության ապահովման հանգույցների ձևավորում, փոքր և միջին ձեռնարկատիրությունների, գենդերային հավասարությանը ուղղված կրթական ծրագրեր և դրամաշնորհային օգնության ծրագրեր<br><br>Ապահովել տրանսպորտային ենթակառուցվածքների և | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն<br><br>Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմեր<br><br>Տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ) | 2026-2030 թվականներ<br><br>Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակ | 2,800,000 | 8,100,000 | 21,500,000 | 6,700,000 | 7,000,000 | 46,100,000 | Հայաստանի Հանրապետությա ն պետական բյուջե,<br><br>վարկային միջոցներ |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | երթուղիների զարգացմանն ուղղված միջոցառումներ<br><br>Ապահովել նավիգացիոն և տեղեկատվական համակարգերի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում<br><br>Ջրամատակարարման համակարգի բարելավում, փողոցների բարեկարգում, լուսավորում, հեծանվաուղիների գծանշում, քաղաքների, գյուղերի կենտրոնական մասերի, կանաչապատ տարածքների բարելավում, ըստ անհրաժեշտության, միանման տանիքներով թաղամասերի ձևավորում, աղբամանների տեղադրում և սպասարկում, համայնքների կողմից սանիտարական հանգույցների տեղադրում և սպասարկման կազմակերպում/կլաստերնե րում և դրանցից դուրս գտնվող զբոսաշրջային վայրերի հարակից տարածքներում/<br><br>Զբոսաշրջային կլաստերի՝ արտաքին շուկաներին հասանելիության բարձրացում, տեղաշարժման հնարավորությունների նոր ձևերի ներկայացում, զբոսաշրջային գրավչությունների միջև կապի ապահովում, տնտեսավարողների միջև համագործակցության կապերի ակտիվացում, զբոսաշրջային գրավչության աճին նպաստող մարկետինգային ծրագրերի իրականացում<br><br>Բրենդինգի, շուկայավարման և խթանման գործողություններ | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | զբոսաշրջության արժեքային շղթայում<br><br>Ընտրված վարչատարածքային միավորներում կամ բնակավայրերում փառատոնային կամ այլ նմանատիպ միջոցառումների համար նախատեսված տարածքների առանձնացում, որտեղ, անհրաժեշտության դեպքում, համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում չեն լինի ժամային սահմանափակումներ բարձր ձայնի կամ աղմուկի համար<br><br>Դեպի զբոսաշրջության գրավչության վայրեր տանող ճանապարհներին զբոսաշրջային միջազգային չափանիշներին համապատասխան ուղղորդիչ նշանների, տեղեկատվական վահանակների տեղադրում, այդ թվում՝ | | | | | | | | | | | |
| 4.2.3.1 | Արենի | Ճանապարհային և փողոցների ցանցի վերականգնում՝ քաղաքային շարժունակության, հիմնական տեսարժան վայրերի և զբոսաշրջային գրավչությունների հասանելիությունը բարելավելու համար<br><br>Արշավային արահետների ցանցերի ստեղծում և ճամբարային նոր վայրերի հիմնում՝ բնահեն զբոսաշրջության գործունեությունը հեշտացնելու համար<br><br>Թանգարանների և մշակութային կենտրոնների | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հիմնում կամ վերականգնում<br><br>Գինու թեմատիկայով զբոսաշրջային արդյունքների ձևավորում | | | | | | | | | | | |
| 4.2.3.2 | Դիլիջան | Ներքաղաքային կապի բարելավում և ճանապարհային ենթակառուցվածքի վերականգնում<br><br>Աղստև գետի աղտոտման նվազեցում և հեղեղման ռիսկի մեղմում՝ հենապատերի ամրացում կամ բարձրացում, բնահեն լուծումներ գետափնյա մասերի վերականգնման համար՝ նորից տնկելով տեղի բուսականությունը և բարելավելով դրենաժի համակարգերը և հետիոտնային կամուրջների կառուցումը՝ Դիլիջան քաղաքի հարակից զբոսայգու հասանելիությունը բարելավելու համար<br><br>Ճոպանուղու կառուցում՝ Դիլիջան քաղաքի կենտրոնը կապելով Թախտա թաղամասի հետ՝ խցանումները նվազեցնելու համար, միաժամանակ բարելավելով կապը և հասանելիությունը քաղաքում<br><br>Փողոցների հարդարում և հետիոտնային գոտիների և զբոսաշրջային երթուղիների | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
